

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԻՂՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՂՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

1. Ծրագիրը մշակվել է «Հիդրոդերևութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (այսուհետ՝ ՀՕԿ) կոնվենցիայի, Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) «Հիդրոդերևութաբանության բնագավառում փոխգործակցության մասին» և «Անկախ պետությունների համագործակցության միջպետական հիդրոդերևութաբանական ցանցի մասին» համաձայնագրերի դրույթների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1886-Լ, 2022 թվականի նոյեմբերի 3-ի N 1692-Լ, 2023 թվականի փետրվարի 2-ի N 174-Լ, 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1717-Լ որոշումներով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը վերապահված միջոցառումների հիման վրա:

2. Ծրագրով կանոնակարգվում են «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից 2024-2026 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոդերևութաբանական աշխատանքները՝ ուղղված հիդրոդերևութաբանական երևույթների և պրոցեսների դիտարկումների պետական ցանցում իրականացվող մոնիթորինգի արդյունքում ստացվող տեղեկատվությամբ հասարակության, պետական կառավարման համակարգի մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց պահանջմունքների բավարարմանը՝ գիտակցելով այդ տեղեկատվության կարևորությունը:

1) վտանգավոր հիդրոոդերևութաբանական պայմաններից, այլ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից տնտեսության և բնակչության պաշտպանության.

2) տնտեսական և բնապահպանական բնույթի որոշումների ընդունման.

3) պետության հիդրոոդերևութաբանական անվտանգության ապահովման.

4) եղանակակլիմայական պայմանների, այլ հիդրոոդերևութաբանական և հելիոտերկրաֆիզիկական երևույթների համընդգրկուն փոփոխությունների ուսումնասիրման.

5) միջազգային հիդրոոդերևութաբանական ցանցի հետ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի գործունեության միասնականացման և այլ հարցերում:

3. Ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1082-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով այդ աշխատանքների համար նախատեսված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներն ու ծավալները:

4. Ծրագրում օգտագործված հիմնական հասկացություններն ունեն նույն իմաստը, որոնք ներկայացված են «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» օրենքում:

## 2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

5. «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ն ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, բնակչությանը, տնտեսության տարբեր ճյուղերին հիդրոոդերևութաբանական փաստացի պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների, կլիմայի ներկա և ապագա վիճակի մասին տեղեկատվությամբ՝

1) անբարենպաստ հիդրոոդերևութաբանական պայմաններից բնակչությանը և տնտեսությունը պաշտպանելու նպատակով.

2) մարդկանց կյանքին և սեփականությանն սպառնացող վտանգի և հնարավոր վնասի նվազեցման նպատակով.

3) շրջակա միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացման նպատակով:

### 3. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

6. Հանրապետության տարածքում՝ մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով՝ 45 օդերևութաբանական կայաններում լրիվ ծրագրով, միաժամանակ դիտարկումներ են իրականացվելու 49 ավտոմատ օդերևութաբանական կայաններում, իսկ 24 հիդրոլոգիական դիտակետերում՝ կրճատ ծրագրով (միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան բարձրության), Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան Գրինվիչի ժամանակով ժամը 00:00–ին, 03:00–ին, 06:00–ին, 09:00–ին, 12:00–ին, 15:00–ին, 18:00–ին և 21:00–ին, իսկ մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի նկատմամբ՝ շուրջօրյա դիտարկումների իրականացում հետևյալ օդերևութաբանական տարրերի նկատմամբ՝

<b>Աշխատանքների (տարրերի) անվանումները</b>	<b>Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետը</b>	<b>Կայանների քանակը</b>
1) Օդի ջերմաստիճան՝ ա. նվազագույն բ. առավելագույն գ. ժամկետային	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	45 կայաններում
2) Հողի մակերևույթի ջերմաստիճան՝ ա. նվազագույն բ. առավելագույն գ. ժամկետային	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	42 կայաններում
3) Հողի ջերմաստիճանը 5, 10, 15, 20 սմ խորությունների վրա	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	21 կայաններում
4) Հողի 20, 40, 80 (կամ 60), 120 (կամ 100) սմ խորությունների ջերմաստիճանը	տարվա տաք ժամանակաշրջանում՝ յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ, ցուրտ ժամանակաշրջանում՝ օրական 1 անգամ	3 կայաններում՝ Երևան Ագրո, Մարտունի, Վանաձոր

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետը	Կայանների քանակը
5) Քամի՝ ա. ուղղությունը դիտաժամին բ. միջին արագությունը դիտաժամին գ. առավելագույն արագությունը դիտաժամին դ. առավելագույն պոռթկումը դիտաժամերի միջև	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	45 կայաններում
6) Տեսանելիություն՝	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	45 կայաններում
7) Անպամածություն՝ ա. անպամածության քանակը բ. անպերի ձևերը (տեսակները) գ. անպերի բարձրությունը	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	45 կայաններում
8) Եղանակի բնութագիրը ա. դիտաժամին բ. դիտաժամերի միջև	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	45 կայաններում
9) Դիտված մթնոլորտային երևույթները ա. երևույթի սկիզբը բ. ավարտը գ. ինտենսիվությունը	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	45 կայաններում
10) Օդի խոնավությունը՝ ա. հարաբերական խոնավություն բ. հազեցման պակասորդը գ. ջրային գոլորշու առաձգականությունը դ. ցողի կետը	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	45 կայաններում
11) Մթնոլորտային ճնշումը՝ ա. կայանի բարձրության վրա բ. ծովի մակարդակի կամ համապատասխան իզոբարական մակերևույթի վրա գ. բարոմետրական տենդենցի բնույթը և չափը	շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ	45 կայաններում
12) Տեղումների քանակը	օրական 2 անգամ	45 կայաններում
13) Գոլորշացումը	օրական 4 անգամ	7 կայաններում
14) Ձնածածկույթի՝ ա. բարձրությունը բ. շրջապատի ձնածածկվածության աստիճանը գ. խտությունը դ. ջրի պաշարը	օրական 1 անգամ	45 կայաններում
15) Վտանգավոր մթնոլորտային երևույթների բնութագիրը	շուրջօրյա	38 կայաններում

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետը	Կայանների քանակը
ա. սկիզբը		
բ. ավարտը		
գ. ինտենսիվությունը		
16) Սառցակալումը (մերկասառույց, ջինջառ)	երևույթի առկայության դեպքում ոչ պակաս, քան 1,5 ժամը մեկ անգամ	3 կայաններում՝ Գյումրի, Անանուն լեռնանցքի, Պուշկինի լեռնանցքի
ա. սկիզբը		
բ. ավարտը		
գ. ինտենսիվությունը		
17) Արևափայլի տևողությունը	ըստ տևողության՝ 1-3 անգամ	27 կայաններում
18) Հողի մակերևույթի վիճակը	օրական 1 անգամ	45 կայաններում

#### 4. ԱԵՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

7. Երևանի աերոլոգիական կայանում օրական մեկ անգամ մթնոլորտի ռադիոզոնդարկման իրականացում Գրինվիչի ժամանակով 00 ժամին՝ մինչև 30 կմ բարձրության մթնոլորտի տարբեր շերտերի հիմնական օդերևութաբանական պարամետրերի՝ ջերմաստիճանի, խոնավության, ճնշման, քամու ուղղության և արագության ուսումնասիրման նպատակով:

#### 5. ՀԵԼԻՈԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

8. Ակտինոմետրիական շուրջօրյա դիտարկումների իրականացում 3 կայաններում (Երևան, Մարտունի, Սևան)՝ օրվա ցերեկային ժամերին՝ 3 ժամը մեկ անգամ (Գրինվիչի ժամանակով ժամը 06:30, 09:30, 12:30, 15:30, 18:30), գիշերային ժամերին՝ մեկ անգամ (Գրինվիչի ժամանակով ժամը 21:30-ին), արեգակի և երկրի ճառագայթման հաշվեկշռի բաղադրիչների վերաբերյալ՝ ուղիղ ճառագայթման, ցրված ճառագայթման, անդրադարձված ճառագայթման, գումարային ճառագայթման հաշվեկշռի, մակերևույթի ալբեդոյի ուսումնասիրման նպատակով:

9. Օզոնոմետրիական դիտարկումների իրականացում Ամբերդի դժվարամատչելի օդերևութաբանական կայանում՝ Դոբսոնի սպեկտրաֆոտոմետրով, օրվա ցերեկային ժամերին պարզ երկնքի դեպքում 3-5 անգամ:

## 6. ԱԳՐՈՑԻԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

10. Հանրապետության բոլոր մարզերում տեղակայված օդերևութաբանական ցանցի 37 կայաններում իրականացվում են ագրոօդերևութաբանական դիտարկումներ: Դիտարկումները կատարվում են 31 գյուղատնտեսական մշակաբույսերի վերաբերյալ (հացահատիկային և բանջարանոցային մշակաբույսեր, պտղատուներ, կարտոֆիլ և խաղող), ինչպես նաև խոտհարքներում և արոտավայրերում, ըստ ստորև բերված աղյուսակի՝

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետը
<b>1. ՎԵՓԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՈՒՄ</b>	
1) Բույսերի զարգացման փուլերի որոշում	2 օրը մեկ անգամ (40 կայան)
2) Բույսերի բարձրության որոշում	10 օրը մեկ անգամ (19 կայան)
3) Բույսերի խտության որոշում (1 քառ. մ վրա)	3-5 անգամ (25 կայան)
4) Բույսերի վիճակի և դաշտի մոլախոտային աղտոտվածության որոշում	10 օրը մեկ անգամ (41 կայան)
5) Բերքատվության տարրերի որոշում	տարին 3 անգամ (22 կայան)
6) Բերքի կառուցվածքի որոշում	տարին 1 անգամ (22 կայան)
7) Հողի վերին շերտերի (0-5 սմ) վիճակի որոշում՝ աչքաչափային մեթոդով	հարակից չոռոզվող տարածքներում, ամեն օր (15 կայան)
8) Հողի խոնավության գործիքային որոշում	ամիսը 3 անգամ (2 կայան)
9) Հողի խոնավության որոշում 9 կայաններում՝ մինչև 1 մ խորության 5 մակարդակների վրա	ըստ ստանդարտներով սահմանված ժամկետների (10 կայան)
10) Ջերմասեր մշակաբույսերի հողի վարելաշերտի ջերմաստիճանի որոշում	1 ամսվա ընթացքում, 2 օրը մեկ անգամ (20 կայան)
11) Հողի կեղևակալվածության որոշում	1 ամսվա ընթացքում, 2 օրը մեկ անգամ (20 կայան)

Աշխատանքների (տարրերի) անվանումները	Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետը
12) Մշակաբույսերի վնասվածության որոշում՝ պայմանավորված օդերևութաբանական անբարենպաստ պայմանների ազդեցությամբ	երևույթի առկայության դեպքում
13) Արոտավայրերում խոտածածկի և հողի վերին շերտի պայմանների որոշում	արածեցման սեզոնում, 10 օրը մեկ անգամ (7 կայան)
14) Պտղատուների վիճակի հետազոտություն	1 անգամ գարնանը՝ ծաղկման և պտղակալման ժամանակաշրջանում (30 կայան)
15) Ակտիվ և էֆեկտիվ ջերմաստիճանների որոշում ծառերի ծաղկման ժամանակաշրջանում	1 անգամ գարնանը՝ ծաղկման ժամանակաշրջանում (8 կայան)
<b>2. ՈՉ ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՈՒՄ</b>	
1) Աշնանացան ցորենի և ցանովի խոտաբույսերի կենսունակության որոշում	2 անգամ՝ հունվարին և փետրվարին (20 կայան)
2) Պտղատուների ճյուղերի կենսունակության որոշում	-18°C ցածր ջերմաստիճանների դեպքում՝ անմիջապես, մարտ ամսին՝ պարտադիր կարգով (30 կայան)
3) Աշնանացան ցորենի թփակալման հանգույցի ջերմաստիճանի որոշում	ձմռան ընթացքում (1 կայան)
4) Հողի սառածության և (կամ) հալվածության խորության որոշում	ձմռան ընթացքում, (4 կայան)

## 7. ՌԱԴԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

11. Հիդրոօդերևութաբանական ցանցի 22 օդերևութաբանական կայաններում ռադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ ամեն օր, Գրինվիչի ժամանակով ժամը 06:00-ին և ժամը 18:00-ին իրականացնել գամմա ֆոնի չափումներ:

Երևանյան լաբորատորիայում իրականացնել մթնոլորտից երկրի մակերևույթի վրա տեղացող ռադիոակտիվ փոշու խտության ամենօրյա չափումներ:

12. Իրականացնել օդերևութաբանական կայաններից բերված հողի նմուշների գումարային բետտա-ակտիվության չափումներ:

13. Իրականացնել ատոմակայանի շրջակայքից (Մեծամոր գետից) բերված ջրի նմուշներում կոշտ մնացորդների գումարային բետտա-ակտիվության չափումներ:

#### 8. ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

14. Հիդրոլոգիական ռեժիմային ուսումնասիրությունների իրականացում յոթ գետավազանային (Դեբեդ, Աղստև, Ախուրյան, Մեծամոր-Քասախ, Սևան-Հրազդան, Արփա, Հարավային) հիդրոլոգիական կայանների 80 գետային, 2 ջրանցքների (Արփա-Սևան ջրատար, Հրազդան հիդրոէլեկտրակայանի ուղղաթեք ջրանցք) 5 ջրամբարային (Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Մարմարիկի և Ագատի) և 4 լճային (Սևանա լճի) դիտակետերում, ինչպես նաև Արաքս-Սուրմալու, Ախուրյան-Հայկաձոր և Ախուրյան-Բագարան հիդրոլոգիական դիտակետերում Թուրքիայի Հանրապետության մասնագետների հետ համատեղ ջրաչափական աշխատանքների կատարում, ըստ ստորև բերված աղյուսակի՝

<b>Աշխատանքների (տարրերի) անվանումները</b>	<b>Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետները</b>
1) գետերում՝	
ա. ջրի ելքը	վարարման շրջանում ամսական 3-4 անգամ, մյուս ամիսներին՝ 1-2 անգամ
բ. ջրի մակարդակը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
գ. ջրի և օդի ջերմաստիճանը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
դ. սառցային երևույթները	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ (երևույթի առկայության դեպքում)
2) Սևանա լճի ջրի ջերմաստիճանը տարբեր խորություններում, ալիքավորման աստիճանը, ջրի թափանցելիության	առնվազն ամսական 1 անգամ



<b>Աշխատանքների (տարրերի) անվանումները</b>	<b>Ամրագրման հաճախականությունը և (կամ) ժամկետները</b>
սահմանը, քանու արագությունը, օդի ջերմաստիճանը և ջրային գոլորշու պարզիալ ճնշումը	
3) գոլորշացման դիտարկումներ 6 օդերևութաբանական կայաններում (Վանաձոր, Օձուն, Սևան, Վարդենյաց, Մարտունի, Արարատ)	շուրջօրյա՝ 4 ժամը մեկ անգամ
4) Սևանա լճի 4 դիտակետերում (Սևան թկղզ., Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի)	
ա. լճի ջրի մակարդակը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
բ. ջրի ջերմաստիճանը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
գ. օդի ջերմաստիճանը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
դ. սառցային երևույթները	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ (երևույթի առկայության դեպքում)
5) Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Մարմարիկի ջրամբարներում՝	
ա. ջրի ջերմաստիճանը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
բ. ջրի ծավալը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
գ. ջրի մակարդակը	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ
դ. սառցային երևույթները	յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ (երևույթի առկայության դեպքում)

**9. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

15. 2024-2026 թվականների ընթացքում նախատեսվում են գիտահետազոտական աշխատանքների իրականացման շրջանակներում՝

1) վերլուծել Հայաստանի Հանրապետության տարածքի եղանակակալիմայական պայմանները ձևավորող սինօպտիկական պրոցեսների փոփոխությունները վերջին տասնամյակում, բացահայտել այդ պրոցեսների ցիկլայնությունը, եղանակի սեզոնային կանխատեսումների մեջ օգտագործելու համար.

2) վերլուծել և առանձնացնել երաշտային պայմաններ ձևավորող սինօպտիկական պրոցեսների հաճախականության փոփոխությունը վերջին տասնամյակում, քարտեզագրել տեղումնագուրկ օրերի թիվը յուրաքանչյուր պրոցեսի ազդեցության դեպքում.

3) ուսումնասիրել հանրապետությունում ուշ գարնանային ցրտահարությունների հաճախակիացման պատճառները.

4) ուսումնասիրել կարկտաբեր ամպերի առաջացման գենետիկական, մորֆոլոգիական կառուցվածքը Հայաստանի Հանրապետության տարածքում, բացահայտել կարկտաբեր ամպերի շարժման ուղղության առանձնահատկությունները, լեռնազանգվածների վրա նրանց զարգացման կամ թուլացման տենդենցը.

5) գնահատել տեղատարափ անձրևների դեպքերի փոփոխությունը վերջին տասնամյակում և բացահայտել դրա պատճառները, կատարել դրանց առաջացման սինօպտիկական պրոցեսների դասակարգում.

6) շարունակել վերլուծել և առանձնացնել ուժեղ քամիներ առաջացնող սինօպտիկական պրոցեսների հիմնական տիպերը և ենթատիպերը Հայաստանի Հանրապետության տարածքում, հատուկ ուշադրություն դարձնելով ներզանգվածային ամպրոպների ժամանակ առաջացող ուժեղ փոթորկանքներին.

7) փորձարկել և գնահատել տարբեր մեծությամբ քայլերով եղանակի կանխատեսման թվային մոդելների արդարացման աստիճանը.

8) ներդնել ազրոօդերևութաբանական կանխատեսումների թվային մեթոդներ և ծրագրային փաթեթներ, հիմքը դնելով երաշտային երևույթներ առաջացնող օդերևութաբանական երևույթների մոդելավորումը.

9) վերլուծել և ամփոփել նախորդ տարվա դիտարկումների հավաքագրված տվյալները, կազմել Հայաստանի Հանրապետության տարածքի տարվա կլիմայական

նկարագիրը, հաշվետվություն ներկայացնել ՀՕԿ-ի VI տարածաշրջանային ստացիա-  
ցիայի տարածաշրջանային կենտրոնին և Հայաստանի Հանրապետության ազգային  
վիճակագրական ծառայությանը.

10) իրականացնել Հայաստանի տարածքի կլիմայական (ամսական, սեզո-  
նային և տարեկան) հիմնական տարրերի՝ միջին, առավելագույն, նվազագույն  
ջերմաստիճանների և տեղումների քանակի և նորմայից դրանց շեղումների  
վերլուծություն՝ քարտեզագրելով ստացված արդյունքները.

11) ապահովել մոնիթորինգի արդյունքների անգլերեն տարբերակի տրա-  
մադրումը Գերմանիայի եղանակի ծառայությանը՝ ՀՕԿ-ի Եվրոպայի տարածա-  
շրջանի կլիմայական մոնիթորինգի համակարգի կայքում տեղադրելու համար.

12) վերանայել կլիմայական բոլոր հարաչափերի նորմերը, ավելացնելով  
նախորդ տարվա դիտարկումների տվյալները, միաժամանակ իրականացնելով  
որակի կառավարում՝ ապահովելու շարքերի համասեռությունը.

13) ըստ գործող օդերևութաբանական կայանների (որոնք ունեն դիտարկում-  
ների շարունակական պատմական շարքեր) վերջին 30 տարիների ընթացքում  
կարկտի միջին և առավելագույն օրերի թվի հաշվարկներ.

14) գնահատել ջերմային կղզիների ազդեցությունը խոշոր քաղաքներում՝  
օգտագործելով փաստացի և արբանյակային դիտարկումների տվյալները.

15) բարելավել Հայաստանի Հանրապետության տարածքում ջերմային և  
ցուրտ ալիքների հաշվարկային մեթոդիկան և գնահատել այդ ինդեքսների  
դինամիկան.

16) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի  
ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ համատեղ  
գնահատել կլիմայի փոփոխության միջկառավարական խմբի կողմից առաջարկ-  
ված գլոբալ կլիմայական մոդելների տարածաշրջանային կլիման վերարտադրելու  
ունակությունը.

17) գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ համատեղ իրականացնել ուսումնասիրություններ գլոբալ կլիմայական մոդելների տեղայնացման ուղղությամբ՝ կիրառելով բարձր լուծաչափի տարածաշրջանային կլիմայական մոդելներ.

18) բարելավել եղանակի թվային հետազոտման և կանխատեսման (WRF) մոդելի արդյունքները կոնվեկցիոն պրոցեսների համար՝ փորձարկելով տարբեր միկրոֆիզիկական և կոնվեկտիվ պարամետրիզացիաների սխեմաներ.

19) իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում երաշտային պայմանների տասնօրյակային, ամսական և սեզոնային մոնիթորինգ՝ օգտագործելով նաև բուսականության աճի գնահատման արբանյակային տեղեկատվությունը: Ներդնել տեղումների ստանդարտացված, բուսականության աճի գնահատման, բուսականության վիճակի միջին սահմանային, արբանյակային ինդեքսները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում երաշտի գնահատման համար.

20) հաշվարկել և գնահատել կլիմայական էքստրեմումների ինդեքսները Հայաստանի Հանրապետության համար և դրանց դինամիկան՝ պայմանավորված կլիմայի փոփոխությամբ.

21) իրականացնել գարնանային և աշնանային ցրտահարությունների, դրանց ինտենսիվության, դիտման ժամկետների գնահատում և քարտեզագրում՝ օգտագործելով Աշխարհագրական տեղեկատվական համակարգի քարտեզագրման տեխնոլոգիաները.

22) վերլուծել Հայաստանի Հանրապետության տարածքում արեգակնային ճառագայթման արբանյակային տվյալները և դրանց ճշտությունը՝ օգտագործելով օդերևութաբանական կայաններում իրականացված դիտարկումների տվյալները.

23) գնահատել կլիմայի փոփոխության ազդեցությունը ձնածածկույթի ձևավորման և քայքայման ժամկետների վրա.

24) առանձին էկոհամակարգերի (անտառ, գյուղատնտեսական հողահանդակներ, արոտավայրեր) համար գնահատել միկրոկլիմայական պատկերներ և դրանց բնութագրիչների փոփոխության միտումները՝ կիրառելով նաև բուսականության աճի գնահատման, բուսականության վիճակի միջին սահմանային և այլ

արքանյակային ինդեքսների տվյալները՝ գնահատելով էկոհամակարգերի խոցելիությունը.

25) ներդնել և տեղայնացնել լեռնային երկրներում փորձարկված հիդրոլոգիական մոդելներ, ելնելով դիտարկումների տվյալների առկայությունից.

26) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ համագործակցության շրջանակներում մշակել և ներդնել Հայաստանի Հանրապետության տարածքում ձնածածկ տարածքների քարտեզների կազմման, արքանյակային տեղեկատվության կիրառմամբ ձնածածկույթի մոնիթորինգի գործիքակազմ-ծրագրային փաթեթ, զարնանային վարարումների ժամանակահատվածում հոսքի ծավալների կանխատեսումների արդարացվածության բարձրացման նպատակով.

27) հիմնել գետավազանային հիդրոլոգիական կայաններից տեղեկատվության փոխանցման առցանց համակարգ՝ օպերատիվ հիդրոլոգիական տեղեկատվության սպասարկման կատարելագործման նպատակով.

28) լրամշակել և կատարելագործել Սևանա լճի մակարդակի փոփոխության, գետային ներհոսքի, լճից գոլորշացման և դիտարկվող հինգ ջրամբարների առավելագույն լցվածության կանխատեսումների մեթոդիկաները.

29) ներդնել մեզոմասշտաբ հիդրոլոգիական մոդելը (mHM) Սևանա լճի գետային ներհոսքի և ավազանի առանձին գետերի հոսքի հաշվարկման համար.

30) շարունակել «Մերձավոր Արևելքի և Սևծովյան տարածաշրջանի երկրներում հանկարծահաս հեղեղումների կառավարում» համակարգի միջոցով ստացվող արդյունքների կիրառումը հանկարծահաս հեղեղումների կանխատեսման և անբարենպաստ ու վտանգավոր իրավիճակների վերաբերյալ նախագուշացումների կազմման համար, ապահովելով համակարգի թարմացումներին համարժեք կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները.

31) գնահատել գետավազաններում սակավաջրության գնահատման համար ՀՕԿ-ի կողմից առաջարկվող ինդեքսների կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետության գետերի համար, ներդնել ընտրված ինդեքսների

հաշվարկման եղանակներ և ապահովել կարողությունների զարգացում այդ ուղղությամբ.

32) կազմել և տպագրել «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային ռեսուրսների ամենամյա տվյալներ» հիդրոլոգիական ամենամյա տարեգիրք.

33) կազմել և տպագրել Ջրային մակերևութային գոլորշացման վերաբերյալ ամենամյա ամփոփագիրք.

34) հիմնական հիդրոլոգիական բնութագրիչների հաշվարկներ.

35) բազմաշերտ հիդրոոդերևութաբանական քարտեզների, աղյուսակների, գրաֆիկների կազմում, առանձին քարտեզների ներկայացում ինտերնետում.

36) շարունակաբար ուսումնասիրել հիդրոոդերևութաբանական տվյալներով պետական կառավարման մարմիններին և այլ շահառուներին տրամադրվող տեղեկատվության որակը՝ բարելավելով այն օգտագործելով քարտեզներ, գրաֆիկներ, մետեոգրամներ, առավել հասցեական և պարզ տեղեկատվություն.

37) մշակել տարբեր ծրագրերում կլիմայական տեղեկատվության անհրաժեշտության, սպասարկման, մասնագիտական խորհրդատվության ձևեր և մեթոդներ.

38) Հայաստանի Հանրապետության կլիմայական գոտիների քարտեզների թարմացման աշխատանքներ և թեմատիկ կլիմայական քարտեզագրական շերտերի ինտեգրում ազգային գեոպորտալում՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման դրույթներին:

## 10. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

16. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝ կանխատեսումների, տեղեկագրերի, տարեգրերի պատրաստում, ծառայությունների մատուցում և համաշխարհային ու տարածաշրջանային կենտրոններին տեղեկատվության հաղորդում՝ համաձայն ՀՕԿ-ի կոնվենցիայով, Անկախ պետությունների համագործակցության միջպետական համաձայնագրերով, սույն ծրագրով ամրագրված, ինչպես նաև երկկողմ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների:

Կայաններից և դիտակետերից ստացված տեղեկատվության վերլուծման, մշակման և ընդհանրացման արդյունքում ապահովվում է դիտված եղանակային պայմանների օպերատիվ վերլուծությունը, կանխատեսումների կազմումը, եղանակի շաքաթական, ամսական տեսությունների կազմումը և հիդրոոդերևութաբանական տարրերի բազմամյա տվյալների հետ համեմատումը ու տվյալների բանկի ստեղծումը: Իրականացվում է հասարակությանը և պետական կառավարման մարմիններին հիդրոոդերևութաբանական տեղեկատվությամբ ապահովումը:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ մասի հիդրոոդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվության սպառողներն են Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիները, իրավաբանական անձինք, ինչպես նաև օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Տեղեկատվության տրամադրման հաճախականությունը, կատարման ժամկետներն և հիմնական սպառողներն արտացոլված են ստորև.

Տրամադրվող հիդրոոդերևութաբանական տեղեկատվություն.		
Անվանումը	Տրամադրման հաճախականությունը և (կամ) կատարման ժամկետը	Սպառողները
1. Հիդրոոդերևութաբանական տեղեկագիր, որը ներառում է. - եղանակի փաստացի քարտեզ - եղանակի 5 օրյա կանխատեսում՝ 10 մարզերի և Երևան քաղաքի - ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության և գեոմագնիսական դաշտի վիճակի փոփոխությունների կանխատեսում - Սևանա լճի մակարդակ, - ջրամբարների ջրալցվածություն, - գետերում նախորդ և ընթացիկ օրվա ջրի ելքեր,	ամենօրյա	Նախագահի աշխատակազմ Վարչապետի աշխատակազմ Ազգային ժողովի աշխատակազմ Պաշտպանության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Պետական պահպանության ծառայություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Պետական վերահսկողական ծառայություն

<p>- Սևանա լճից բաց թողնված ջրի քանակ,          - Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակ          - հիդրոլոգիական կանխատեսումներ՝ գետերում ջրի ելքերի վերաբերյալ</p>		<p>Տարածքային կառավարման մարմիններ          ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով</p>
<p>2. Ինտերնետային կայքի ամենօրյա թարմացում դիտված եղանակի վերլուծական նյութերով և կանխատեսումներով, ըստ կանխատեսման՝ վտանգավոր հիդրոոլերևութաբանական երևույթների վերաբերյալ նախագուշացումների տեղադրում:</p>	<p>ամենօրյա և ըստ դիտման փաստի</p>	<p>Ազգաբնակչություն</p>
<p>3. Անսական եղանակային պայմանների կանխատեսում</p>	<p>յուրաքանչյուր ամիս</p>	<p>Վարչապետի աշխատակազմ Ներքին գործերի նախարարություն          Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն          Էկոնոմիկայի նախարարության</p>
<p>4. Սեզոնային եղանակային պայմանների կանխատեսում</p>	<p>ըստ սեզոնի</p>	<p>Վարչապետի աշխատակազմ Ներքին գործերի նախարարություն          Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն          Էկոնոմիկայի նախարարության</p>
<p>5. Սեզոնային եղանակային պայմանների վերլուծություն</p>	<p>դեկտեմբեր, մայիս</p>	<p>Հարավ Արևելյան ու Միջերկրածովյան երկրների կլիմայական վերլուծությունների կոնսորցիում</p>
<p>6. Տեսություններ դիտված եղանակային և հիդրոլոգիական պայմանների մասին</p>	<p>յուրաքանչյուր ամիս</p>	<p>Վարչապետի աշխատակազմ Ներքին գործերի նախարարություն          Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն          ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով          Վիճակագրական կոմիտե</p>



7. Տեսություններ հիդրո և ագրոտեխնոլոգիայի արհեստագործական դիտված երևույթների մասին	յուրաքանչյուր շաբաթ	Վարչապետի աշխատակազմ Ներքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն
8. Վտանգավոր երևույթների մասին նախազգուշացումների տրամադրում	ըստ կանխատեսման	Նախագահի աշխատակազմ Վարչապետի աշխատակազմ Ազգային ժողովի աշխատակազմ Պետական կառավարման մարմիններ Տարածքային կառավարման մարմիններ Ազգաբնակչություն
9. Դիտված վտանգավոր հիդրոտեխնոլոգիայի արհեստագործական երևույթների մասին տեղեկատվության տրամադրում	ամենօրյա	Ներքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն
10. Աերոսինոպտիկական նյութեր և կանխատեսումներ	ամենօրյա	Պաշտպանության նախարարություն
11. Կլիմայի մոնիթորինգի վերլուծության տրամադրում	փետրվար	ՀՕԿ-ի VI տարածաշրջանային ասոցիացիայի կենտրոն Վիճակագրական կոմիտե
12. Ծիրանի, դեղձի և խաղողի ծաղկման ժամկետների կանխատեսում	գարուն	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե
13. Բերքատվության կանխատեսումներ ա. ծիրան բ. դեղձ գ. խաղող դ. կարտոֆիլ ե. հացահատիկային մշակաբույսեր զ. բանջարանոցային մշակաբույսեր է. խոտհարքեր	գարուն-ամառ	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե Ազգաբնակչություն
14. Հացահատիկային մշակաբույսերի միջին հանրապետական բերքատվության կանխատեսում Ֆենոլոգիական տարբեր փուլերում	գարուն-ամառ Ժամանակահատվածում	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե
15. Աշնանացան ցորենի ցանքի, աճի, զարգացման, ձմեռման պայմանների և վնասվածության վերաբերյալ տեղեկանքներ	գարուն	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե

16. Հովտային շրջաններում վաղահաս կարտոֆիլի և բանջարանոցային մշակաբույսերի ցանքի և սածիլման ժամկետների վերաբերյալ տեղեկանք	գարուն	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե
17. Հողի խոնավության պաշարների գնահատում վեգետացիայի սկսվելուց առաջ՝ ըստ գոտիների, 0-10 սմ, 0-20 սմ, 0-50 սմ հողաշերտերում	գարուն	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե
18. Աշնանացան ցորենի ֆենոլոգիական փուլերի (մոմային հասունացում և հասկակալում) կանխատեսում	գարուն-ամառ ժամանակահատված	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե
19. Ագրոտեղեկագրերի կազմում ա. տասնօրյակային բ. ամսական	յուրաքանչյուր տասնօրյակ դեկտեմբեր-փետրվար ամիսներին ամսական	Էկոնոմիկայի նախարարություն Վիճակագրական կոմիտե Ներքին գործերի նախարարություն
20. Վեգետացիայի ընթացքի վերլուծություններ արբանյակային տվյալների միջոցով	վեգետացիայի սեզոնին յուրաքանչյուր տասնօրյակ	Էկոնոմիկայի նախարարություն
21. Գետերի գարնանային վարարումների տարրերի կանխատեսում՝ տրվում է հանրապետության գետերի գարնանային վարարումների հոսքի ծավալի, առավելագույն ելքերի, վեգետացիոն ժամանակահատվածի միջին ելքերի, Սևանա լիճ և խոշոր ջրամբարներ գարնանային վարարումների ընթացքում գետային ներհոսքի, 5 ջրամբարների (Արփի լիճ, Ախուրյան, Ապարան, Մարմարիկ, Ազատ) առավելագույն լցվածության, Սևանա լճի մակարդակի վերաբերյալ (վարարումների ընթացքում, դեկտեմբերի 31-ի դրությամբ) կանխատեսումներ, որոնք կազմվում են նախաձմեռային և ձմեռային ամիսների փաստացի, և վարարումների ժամանակաշրջանի կանխատեսում	ամեն տարի մարտի 3-րդ տասնօրյակին	Նախագահի աշխատակազմ Վարչապետի աշխատակազմ Ազգային ժողովի աշխատակազմ Էկոնոմիկայի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Տարածքային կառավարման մարմիններ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով

տեսվող հիդրոոդերևութաբանական պայմանների վերլուծության հիման վրա		
22. Գարնանային վարարումների տարրերի կանխատեսման ճշգրտում	ապրիլ-հունիս ամիսներին (ըստ անհարժեշտության)	Նախագահի աշխատակազմ Վարչապետի աշխատակազմ Ազգային ժողովի աշխատակազմ Էկոնոմիկայի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Տարածքային կառավարման մարմիններ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով
23. Հիդրոլոգիական կանխատեսումներ՝ գետերում ջրի ելքերի վերաբերյալ	տասնօրյակային, ամսական կտրվածքով	Էկոնոմիկայի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Ներքին գործերի նախարարություն
24. Սևանա լճի ջրային հաշվեկշիռ՝ տրվում է տեղեկատվություն Սևանա լճի ջրային հաշվեկշռի մուտքի և ելքի բաղադրիչների արժեքների և դրանց հարաբերակցության, ինչպես նաև լճի ձևաչափական բնութագրիչների վերաբերյալ	ամեն ամսվա և տարվա ավարտից հետո 15 օրվա ընթացքում	Վարչապետի աշխատակազմ Ներքին գործերի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Էկոնոմիկայի նախարարության ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով
25. ՀՀ և Հարավային Կովկասի կլիմայական քարտեզների տրամադրում	յուրաքանչյուր ամիս	ՀՕԿ-ի տարածաշրջանային կենտրոնին՝ Գերմանիայի եղանակի ծառայություն
26. Օդերևութաբանական երաշտի ինտենսիվության գնահատում ՀՀ տարածքի համար	յուրաքանչյուր տասնօրյակ՝ ապրիլ-հոկտեմբեր ժամանակահատվածում	Էկոնոմիկայի նախարարություն
27. Կլիմայական սպասարկումների իրականացում	ըստ հարցումների	Պետական կառավարման մարմիններ Տարածքային կառավարման մարմիններ Գիտական հաստատություններ
28. Կլիմայական տեղեկագրերի և օդերևութաբանական	շարունակական	Պետական կառավարման մարմիններ

տարրերի նորմերի վերանայում		Տարածքային կառավարման մարմիններ Գիտական հաստատություններ
29. Կլիմայի փոփոխության սցենարների վերանայում	2026 թ.	Պետական կառավարման մարմիններ Տարածքային կառավարման մարմիններ Գիտական հաստատություններ
30. Երևան քաղաքում և մարզկենտրոններում դիտված միջին օրական ջերմաստիճանների տրամադրում	մարտ-հոկտեմբեր	Առողջապահության նախարարություն
31. Ձնածածկույթի վերաբերյալ տեղեկանք	դեկտեմբեր-մարտ	Պետական կառավարման մարմիններ Տարածքային կառավարման մարմիններ
32. Հայաստանի Հանրապետության տարածքում տաք և ցուրտ ալիքների գնահատում	մշտապես	Պետական կառավարման մարմիններ Տարածքային կառավարման մարմիններ Վիճակագրական կոմիտե
33. Եղանակի թվային կանխատեսման WRF մոդելի արդյունքների բարելավում	մշտապես	Պետական կառավարման մարմիններ Տարածքային կառավարման մարմիններ
34. Տարեկան կլիմայական վերլուծության տրամադրում	փետրվար	ՀՕԿ (Ստանձնած պարտավորությունների կատարում) Վիճակագրական կոմիտե
35. Դիտարկումների տվյալների (օդերևութաբանական, գամմա ֆոնի, օզոնոմետրիական) փոխանակություն և հաղորդում	ամենօրյա, շաբաթական, ամսական	ՀՕԿ (Ստանձնած պարտավորությունների կատարում) ԱՊՀ ՀՄԽ (Ստանձնած պարտավորությունների կատարում)

## 11. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

17. «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի հետագա կայուն գործունեության ապահովման, նոր տեխնոլոգիաների ներդրման և մասնագիտական կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով իրականացնել՝

1) հիդրոոդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի փուլային ավտոմատացման և ծառայության արդիականացման ուղղությամբ արդեն իսկ մեկնարկած միջոցառումների շարունակականության ապահովում.

2) վտանգավոր հիդրոոդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում.

3) կլիմայի փոփոխության նկատմամբ առաջնահերթ զգայուն հիվանդությունների համար ջերմային ալիքների վաղ նախազգուշացման համակարգերի ներդրում.

4) եղանակային կանխատեսումների մշտադիտարկման և վաղ ազդարարման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում.

5) մասնագետների վերապատրաստում և ատեստավորում՝ ըստ կարգի և ժամանակացույցի.

6) համագործակցություն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ ուսանողներին աջակցելու, նրանց ուսումնական պրակտիկան կազմակերպելու և, ըստ հնարավորության, մասնագիտական աշխատանքով ապահովելու ուղղությամբ.

7) ՀՕԿ-ի հիմնական սահմանադրական մարմինների և ԱՊՀ հիդրոոդերևութաբանության միջպետական խորհրդի (այսուհետ՝ ՀՄԽ) հերթական նստաշրջաններին մասնակցություն, ինչպես նաև ընդունված որոշումների կատարում.

8) միջոցառումներ՝ նվիրված օդերևութաբանության, օզոնային շերտի պահպանության և ջրի համաշխարհային օրերին.

9) միջազգային և տարածաշրջանային մակարդակով կայուն գործընկերության ապահովում, մասնավորապես, միջազգային կառույցների և գործընկերակրների կողմից համատեղ հետաքրքրություն ներկայացնող ծրագրերին և միջոցառումներին մասնակցության խթանում.

10) ՀՕԿ-ի, ԱՊՀ և ՀՄԽ-ի, ինչպես նաև այլ ծրագրերով մասնագետների վերապատրաստում և որակավորման բարձրացում.

11) այլ երկրների ազգային հիդրոոդերևութաբանական ծառայությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (այդ թվում՝ դոնոր) հետ համագործակցության ընդլայնում և ծրագրերի իրականացում՝ համաձայն ցանկի.

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

NN ը/կ	Վայրը	Միջոցառման անվանումը (նպատակը)	Ժամկետը 2024 թ.	Ժամկետը 2025 թ.	Ժամկետը 2026 թ.
1.	ԱՊՀ, ըստ կայանալու վայրի	ԱՊՀ ՀՄԽ-ի աշխատանքային խմբերի նիստեր	2-րդ եռ.	2-րդ եռ.	2-րդ եռ.
2.	ԱՊՀ երկրներ	ԱՊՀ ՀՄԽ-ի 35-րդ, 36-րդ, 37-րդ նստաշրջաններ	3-րդ եռ.	3-րդ եռ.	3-րդ եռ.
3.	Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա	ՀՄԿ ՊՈԱԿ-ի և Ռուսիիդրոմետի միջև երկկողմ համագործակցության վերաբերյալ քննարկումներ՝ Գիտատեխնիկական համագործակցության 2024-2026 թթ. ծրագրի կազմում և դրանից բխող աշխատանքների իրականացում	ըստ պայմանավորվածության	ըստ պայմանավորվածության	ըստ պայմանավորվածության
4.	Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա	Մասնակցություն Ռուսիիդրոմետի կողմից ընդլայնված նիստերի աշխատանքներին	I եռամսյակ	I եռամսյակ	I եռամսյակ
5.	Ռուսաստանի Դաշնություն քաղաք Մոսկվա, քաղաք Մանսկո Պետերբուրգ	Հիդրոտերևությունների քննարկումներ և մասնագետների վերադասակարգման և վերապատրաստման ուղղությամբ համագործակցության մասին ԱՊՀ միջպետական համաձայնագրի շրջանակներում մասնագետների վերապատրաստում Ռուսաստանի Դաշնությունում ՀՕԿ-ի ռեգիոնալ ուսուցողական կենտրոնում	ըստ ուսումնական ծրագրերի և ֆինանսական հնարավորության	ըստ ուսումնական ծրագրերի և ֆինանսական հնարավորության	ըստ ուսումնական ծրագրերի և ֆինանսական հնարավորության
6.	Շվեյցարիայի Համադաշնություն, քաղաք Ժնև	Մասնակցություն ՀՕԿ-ի հիմնական սահմանադրական մարմինների (գործադիր խորհրդի, տարածաշրջանային ասոցիացիաների, տեխնիկական հանձնաժողովների) նստաշրջաններին	տարվա ընթացքում	տարվա ընթացքում	տարվա ընթացքում
7.	Ըստ կայանալու վայրի	Մասնակցություն ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի Կողմերի համաժողովներին (COP)	ըստ ֆինանսական հնարավորությունների	ըստ ֆինանսական հնարավորությունների	ըստ ֆինանսական հնարավորությունների
8.	Ըստ կայանալու վայրի	Մասնագետների վերապատրաստում ՀՕԿ-ի տարածաշրջանային ուսուցողական կենտրոններում՝ ՀՕԿ-ի կրթության ծրագրի շրջանակներում	ըստ ֆինանսական հնարավորությունների	ըստ ֆինանսական հնարավորությունների	ըստ ֆինանսական հնարավորությունների
9.	«Բազմաբնույթ աղետների վաղ նախագուշացման միասնական տարածաշրջանային համակարգ՝ Ասիայի և Աֆրիկայի տարածաշրջանի համար» ծրագրի միջև փոխըմբռնման հուշագրի խորհրդի և այլ հանդիպումների աշխատանքներին, փոխայցելություններ, համատեղ ծրագրերի իրականացում, աշխատաժողովների կազմակերպում	«Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի և «Բազմաբնույթ աղետների վաղ նախագուշացման միասնական տարածաշրջանային համակարգ՝ Ասիայի և Աֆրիկայի տարածաշրջանի համար» ծրագրի միջև փոխըմբռնման հուշագրի խորհրդի և այլ հանդիպումների աշխատանքներին, փոխայցելություններ, համատեղ ծրագրերի իրականացում, աշխատաժողովների կազմակերպում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
10.	Ֆրանսիայի Հանրապետություն, քաղաք Թուլուզ	«Մետեո-Ֆրանս» և «Մետեո-Ֆրանս ինթերնեյշնլ» կազմակերպությունների հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
11.	Ըստ կայանալու վայրի	Մասնակցություն ՀՕԿ ծրագրերի շրջանակներում կազմակերպվող հանձնաժողովներին, աշխատանքային խմբերի, կոնֆերանսների, աշխատաժողովների աշխատանքներին	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների

12.	ՀՕԿ քարտուղարություն	ՀՕԿ ծրագրերի շրջանակներում գործիք-սարքավորումների և ծրագրային փաթեթներ ձեռք բերելու ուղղությամբ աշխատանքների իրականացում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
13.	Ֆրանսիայի Հանրապետություն	Ֆրանսիական «Meteo Modem» և ֆրանսիական «Սաժիմ» ֆիրմաների հետ տեխնիկական հարցերով համագործակցության իրականացում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
14.	Նորվեգիայի Թագավորություն, քաղաք Օսլո	Նորվեգիայի ջրի և էներգիայի կազմակերպության հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
15.	Իրանի Իսլամական Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն օդերևութաբանական կազմակերպության հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
16.	Շվեյցարիայի Համադաշնություն, քաղաք Ժնև	Օդերևութաբանության և կլիմայագիտության դաշնային գրասենյակի հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
17.	Ավստրիայի Հանրապետություն	Ավստրիայի երկրաբանության, երկրաֆիզիկայի, կլիմայագիտության և օդերևութաբանության դաշնային ինստիտուտի հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
18.	Հարավային Կորեա	Հարավային Կորեայի օդերևութաբանական վարչության հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
19.	Արաբական Միացյալ Էմիրություններ	Ազգային օդերևութաբանության կենտրոնի հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
20.	Ճապոնիա	Ճապոնիայի օդերևութաբանական գործակալության հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
21.	Իտալիայի Հանրապետություն	Ռազմական ավիացիայի և օդերևութաբանության գլխավոր գրասենյակի հետ երկկողմ համագործակցության քննարկում, համատեղ ծրագրերի իրականացում, փոխայցելություններ	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
22.	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	Օդերևութաբանական վարչության ուսումնական կենտրոնում վերապատրաստումների մասնակցություն	ըստ պայմանավորվածության և ֆինանսական	ըստ պայմանավորվածության և ֆինանսական	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների

			հնարավորությունների	հնարավորությունների	
23.	Ըստ կայանալու վայրի	Մասնակցություն Միջերկրածովյան կլիմայի կանխատեսման (MedCOF), Հարավ-արևելյան Եվրոպայի կլիմայի կանխատեսման (SEECOF) և Հյուսիսային Եվրասիայի կլիմայի կանխատեսման (NEACOF) հերթական տարածաշրջանային ֆորումների աշխատանքներին	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
24.	Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մանկո Պետերբուրգ, քաղաք Կիսլովոդսկ	Հիդրոոդերևութաբանական նմուշային սարքերի ստուգաճշտում և չափաբերում	ըստ ժամկետների	ըստ ժամկետների	ըստ ժամկետների
25.	Էստոնիայի Հանրապետություն	Համագործակցության խորացում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների
26.	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, քաղաք Հոննախյենբերգ	Գոբսոնի սպեկտրոֆոտոմետրի հերթական ստուգաբերում՝ ըստ ստուգաբերման եվրոպական կենտրոնի ծրագրի	ըստ պայմանավորվածության		
27.	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, քաղաք Օֆֆենբախ	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն օդերևութաբանական ծառայության (DWD) միջև համագործակցության շրջանակներում փոխայցելություններ, նոր ծրագրերի քննարկում	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների	ըստ պայմանավորվածության և ֆինանսական հնարավորությունների

12. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

19. Ծրագրի ֆինանսական ապահովումը, համաձայն «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի երկրորդ մասի, իրականացվում է «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի համար յուրաքանչյուր տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված պետական աջակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ